

## Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք Ս Ի Ն Օ Դ Ի Օ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Ց .

Յունիս 24. Սինոդը երևանայ վիճակի Հայոց կոնստանտնուպոլիսի տեսչութեան տակ գտնուած բոլոր գործակալներին ուղարկեց ժապաւինեալ տուժարներ անդորրագրերի հետ, և պատուիրեց նոցա ժողովել պողի արդիւնքը 1892 թուի նոյնպէս անցեալ տարիների ապառիկ մնացածները և արձանագրել մատեանի մէջ, պահել ապահով տեղում մինչև ցայլ տնօրէնութիւն, իսկ ժապաւինեալ մատեանները դրամների հետ, եթէ կլինին ուղարկել Սինոդին: Պատուիրեց նոյնպէս Հին-Նախիջևանի, Տաթևի, Աղէքսանդրապոլի և Կարսի հոգևոր կառավարութիւններին, գործակալների միջոցաւ ժողովել նոյնպիսի արդիւնքը և գոյացեալ արդիւնքի հաշիւը օրինաւոր ցուցակով ներկայացնել Սինոդին:

Յունիս 24. Մայր Աթոռի ձեմարանի վարչութեան Յունիսի 15-ից 178 թ. յայտարարութեան համաձայն Սինոդը պատուիրեց ձեմարանի նախկին Տեսուչ բարեշնորհ Նահապետ Աբեղային իւր մօտ գտնուած 950 ռուբլի աշակերտաց աւանդադրամը շուտով ներկայացնել Սինոդին:

Յունիս 26. Սինոդը վերագարձելով Ղարաբաղի Հայոց կոնստանտնուպոլիսի Բաղիշ Իւզբաշեանցի ծննդական վկայականը, աւելորդ համարեց նոր աստիճանաւորների թիւ աւելացնելը:

Յունիս 22. Սինօզի անդամ բարեշնորհ վաճան վարդապետը ծառայութեան գործով գնացած լինելով Նուխի, Սինօզը համարեց նորին բարեշնորհութիւնը բացակայ մինչև իւր վերագարծը:

Յունիս 22. Գրիգոր քահանայ Տնկանց, Մոկաց գաւառի Բէօլենց գիւղացի, Ուղունօրա գիւղի երեսօթխանի տանը վախճանելով թողել էր 31 օսմանեան լիբայ սակի մի փոքր անգլիական սակի և 25 ռուբլի 90 կոպ. թղթաղբամ, որից երեսուն երկու ռուբլի թաղման ծախս հանելով մնացեալ զրամները գործակալը յանձնել է Մայր Աթոռի Գանձապահին պահելու: Սինօզը սոյն գրամներից մի լիբայ ապուլ հանգուցելոյ այրւոյն, որ եկած էր ԼՂմիածին, մնացած 29 լիբայ 2 ռ. 50 կոպ. փոստային ծախսը հանելուց յետոյ ուղարկեց Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիւ Խորէն արքեպիսկոպոսին՝ յանձնելու հանգուցեալ Գրիգոր քահանայի այրւոյն և որբերին, և տոանալ պատշաճաւոր ընկալագիր ու հասցնել Սինօզին:

Յունիս 22. Ղարաբաղի վիճակի կոնսիստորիայն տարւոյս ապրելի 23-ից թ. 505 յայտարարութեան հետ մատուցանելով Աղէքսանդր Տէր-Աստուածատրեանի ծննդեան վկայականն, հարցաքննական թերթն և նորա վիճակի ապահովութեան մասին համախօսագիրն Մէհտիշէն գիւղի ժողովրդեան երկու խնդրագրի հետ միասին, որոնք ստորագրել է մի ոմն Բաբաջան Ղազարեան 40 մարդկանց տեղ, միջնորդել էր քահանայ ձեռնադրել նորան յիշեալ գիւղի ժողովրդի վերայ: Տեղեկութիւն. Շուշի քաղաքի Վերին թաղի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու ժողովրդականք 1886 թուի, Յունիսի 20-ին խնդրել էին իրանց համար քահանայ ձեռնադրել յիշատակեալ Աղէքս. Տէր Աստուածատրեանցին. իսկ Ղարաբաղի կոնսիստորիայն նոյն թուի Կեկտեմբերի 11-ին թ. 1824 խնդրել էր գաղարեցնել ձեռնադրութեան գործը յայտնելով՝ թէ «հայեցեալ ի փոփոխամտութիւն նորա տեարք անգամք անարժան վարկանին հարցաքննել զնա ի քահանայատարաշաճ գիտելիս և վկայել զվարուց և զբարուց նորա

և արժանաւորել զնա աստիճանի քաջանայութեան: Աստի և Սինօզը 1887 թուի Մարտի 2-ի օրագրով Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու ժողովրդի խնդիրը թողեց առանց հետեւանքի:

Հրամայեցին: Արովհետև Ազէքսանդր Տէր-Աստուածատրեանցն իւր վարքով ոչ միայն անարժան է քաջանայական աստիճանին և կոչման, այլ և եկեղեցու սպասաւորութեան, վասնորոյ Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայի միջնորդութիւնը նորա ձեռնադրութեան մասին մերժելով՝ պատուէր տալ անյապագ հեռացնելու նորան եկեղեցու սպասաւորութիւնից: Եւ որովհետև նոյն կոնսիստորիայի անդամները, գիտենալով այնպիսի անձի վարքը և նորա ձեռնադրութեան մի անգամ՝ մերժուած լինելը՝ դարձեալ համարձակել են նորա ձեռնադրութեան խնդիրն յարուցանել, ամենեւին չպատկառելով քաջանայութեան կոչման վսեմութիւնից և նուիրականութիւնից, ուստի այս անգամ յանդիմանել նորանց—Կարապետ և Մեսրոպ քաջանաներին. իսկ Յարութիւն քաջանայ Մելքոնեանցին, որ իբրև 1886-ի անգամ իւր ստորագրութիւնով վկայել է տիրացուի անարժանութեան մասին, և այժմ՝ նորա ձեռնադրութեան համար է ստորագրել, արձակել անդամակցութեան պաշտօնից իբրև փոփոխամիտ և դէպի իւր իսկական պարտաւորութիւնը անտարբեր մէկին. պատուէր տալով թեմի Գեր. Առաջնորդին կարգել նորա տեղը ուրիշ մէկին բարեյոյս քաջանաներից:

Յունիս 14. Սինօզը պատուիրեց Արաստանի և Խմերէթի Հայոց կոնսիստորիային Սինօզի 1891 թուի 4294 թ. հրամանի համաձայն Միքայէլ Սահակեանից ստացած 15000 ռուբլով յօգուտ Ազէքսանդրապօլի օրիորդական դպրոցի, որ կտակել է հանգուցեալ իշխան Ղահրաման Արղութեանցը, գնել արքունի տոկոսաբեր բանկային տոմսեր իւրաքանչիւր հազարական ռուբլի արժողութեամբ և ուղարկել Սինօզին:

Յունիս 24. Սինօզը՝ Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայի՝ Թրիշեցի Աղաբէգ նոյն և Աւետիս Տէր-Յովհաննէսի, Մուշկապղի Խ-

բայէլ Գաղամեանցի: Բանալարցի Խոսրով Գրիգորեանցի, Աղնեցի Միրայէլ Մելիք-Ալլահզիբերգեանցի, Նուխեցի Զաքարիա Մալեանցի և Համբարձում Տէր-Աւագեանցի և Շուշեցի Արիստակէս Տէր-Յովհաննիսեանցի քաջանայ ձեռնադրելու մասին արած միջնորդութիւնը մերժեց, նոցա թերուս լինելու պատճառով:

Յունիս 29. Սինօզի միջնորդութեան համաձայն Երևանի նահանգապետը աղատած լինելով Համամլուեցի Յովհաննէս Թորոսեանցին հարկատուութիւնից հոգևոր ատշուլթեան մէջ մտնելու համար, պատուիրեց Երևանի կոնսիստորիային նշանակել նորան նոյն գիւղի եկեղեցու սպասաւոր:

Յունիս 26. Երևանի Հայոց կոնսիստորիայի միջնորդութիւնը Երևանցի Սիմէօն Սարկաւազ Բաբայեանցի ձեռնադրութեան մասին՝ Սինօզը մերժեց, որովհետև քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութիւնը շարունակուած է և կարող է տեւել երկար գեռ ևս, իսկ խնդրատու ժողովուրդն ևս ունի քաջանաներ:

Յունիս 26. Գօրու գաւառի Կասպ գիւղացի Բաղդասար քաջանայ Տէր-Զաքարեանց, Գորեցի Գրիգոր Տէր-Յարութիւնեանցի արգելուած պսակը կատարելու համար՝ հինգ տարի ժամանակով ենթարկուած է եկեղեցական ապաշխարութեան հոգևոր բարձրագոյն իշխանութիւնից, Տիխիսի Հայոց կոնսիստորիայն 1891 թ. նոյ. 29 4218 թ. յայտարարութեամբ միջնորդուած է Սինօզին կամ արձակել եկեղեցական ապաշխարութիւնից Բաղդասար քաջանայ Տէր-Զաքարեանցին կամ ձեռնադրել տիրացու Սոլոմոն Տէր-Գրիգորեանցին քաջանայ, որովհետև Քախաբէլ գիւղի հեռաւորութեան (22 վերստ) պատճառաւ մեծամեծ գոռուութիւն են կրում իւրեանց հոգևոր պէտքերը լցնելու մասին: Անցեալ Մարտ ամսին Բաղդասար քաջանայ Տէր-Զաքարեանցը ևս խնդրով զիմում է Սինօզին իւր արձակման մասին: Սինօզը պատուիրեց Տիխիսի Հայոց կոնսիստորիային իւր 1888 թւի համարաւ 1836 վճախ համաձայն ստանալ յիշեալ քաջանայից 100 ռուբլի տուգանքը և ապա արձակել ապաշխարանքից և թողլ տալ քաջանայագործութիւն անելու:

Յունիս 26. Սինոզը պատուիրեց Երևանի Հայոց կոնսիստորիային ընդունել հոգևոր տեսչութեան մէջ Բագարատ Սողոմոնեանցին և կարգել սպասաւոր ս. Պետրոս և Պօղոս եկեղեցւոյն:

Յունիս 26. ըստ միջնորդութեան Երևանի Հայոց կոնսիստորիայի, Սինոզը 1890 ամի, Գեկտեմբերի 28-ին օրագրով թոյլ է տալիս Մեղրեցի Մելիք Մկրտչեան Յովհաննէսին պսակուել Սարգսեան վարդուհու հետ: Արից յետոյ կոնսիստորը 1891 ամի Յունիսի 6 ին 2241 թ. յայտարարութեամբ յայտնում է թէ Մեղրեցի նորընծայ Գէորգ քահանայ Տէր-Գաւթեանցը համոզել է վերոյգրեալ Յովհաննէսին թողնել առաջին նշանածը և նոյն թուի փետր. 2-ին առանց հրամանի պսակել է ուրիշ աղջկայ.— Մարիամ Խաչեանցի հետ. որի համար կոնսիստորը փճուել է Մելիք-Մկրտչեանցին ենթարկել մի ամսով եկեղեցական ապաշխարութեան, իսկ Գէորգ քահանայից պահանջել իբրև տուգանք 50 ռուբլի յօգուտ Մայր Աթոռին: Սինոզը պատուիրեց կոնսիստորիային Գէորգ քահանայ Տէր-Գաւթեանցից պահանջել միայն 25 ռուբլի իսկ Մելիք-Մկրտչեանցին ազատ թողնել ապաշխարանքից:

Յունիար 18. թ. 20. Երևանի Գեր. Փօխանորդ Գրիգոր Եպիսկոպոս Գառնակերեան Երևանի սուրբ Սարգիս եկեղեցւոյ քահանայից խնդրի հետ ներկայացնելով Ս. Սինոզին և իւր յայտարարութիւնը, խնդրում է Գրիգոր քահանայ Սուքեասեանին կարգել հովիւ հայ բրիգատնի զինուորների վրայ, որը արդէն ձրիարար կատարել է այդ պաշտօնը չորս տարի, իսկ նորա ծուխը յատկացնել յիշեալ եկեղեցւոյ երկու քահանայ ներին: Արբազան Սինոզը յարգելով Գերապատիւ Թեմակալի առաջարկութիւնը, 10 Ապրիլի տարւոյս օրագրով կարգում է հովիւ նոյն քահանային ժամանակաւորապէս Կոյկասեան տեղական հայ զօրաց վրայ, և նորա ծուխը ժամանակաւորապէս հովուելու համար Գեր. Թեմակալի խնդրանաց համաձայն յանձնում է երկու քահանայից:

Յունիս 29. Երևանի Կոնսիստորայն պատշաճաւոր վկայականների հետ ներկայացնելով Սրբազան Սինոդին 23 քահանայացու տիրացուների մի ցուցակ միջնորդում է Ս. Սինոդին, որպէս զի շուտով անօրէնութիւն լինի նրանց ձեռնադրելու համար, իսկ Ս. Սինոդը այդ քահանայացուներին՝ նոյն իսկ, իրենց վկայականներով բարորոխն անհամապատասխան և անարժան գտնելով քահանայութեան, մերժում է Կոնսիստորիայի այս միջնորդութիւնը և 29 յունիսի տարւոյս յետ է դարձնում Կոնսիստորիային քահանայութեան ձգտող յիշեալ տիրացուների վկայականները: Գիւղերով հանդերձ այդ տիրացուների անուններն են.

Պարոյր Տէր Եփրեմեան և Դաւիթ Տէր Գասպարեան՝ Բլուք գիւղից, Սարգիս Մխիթարեան՝ Գոմեր գիւղից, Արշակ Տէր Սարգսեան՝ Սուանիէրոցի, Մարգար Սամուէլեան՝ Կարգալուեցի, Սահակ Տ. Սահակեան՝ Քարվանսարեցի, Ահարօն Տէր Վարդանեան՝ Բարձաբեցի, Ղուկաս Տէր Յովհաննիսեան՝ Բռնակոթցի, Մանուկ Տ. Մխիթարեան և Մկրտիչ Ղազարեան Ղալաղցի, Մահտեսի Հայրապետ Շահպաղեան՝ Փաշաբեանդցի, Գասպար Տէր Կարապետեան՝ Ղրմիլուեցի, Մարգար Տ. Ղազարեան՝ Որդնաւցի, Գէորգ Տ. Ղևոնդեան՝ Նորագաւթցի, Գէորգ Տ. Դանիէլեան Քօսամահմատցի, Յովսէփ Տ. Յարութիւնեան՝ Խնձորիսկ գիւղից, Յակոբ Պօղոսեան՝ Արթիկցի, Մամիկոն Տ. Ղազարեան՝ Գեօրանցի, Արզուման Տ. Գրիգորեան՝ Օրդաքլուեցի, Մատթէոս Տ. Յովսէփեան՝ Քօլաղաւանցի, Կարապետ Տ. Մոսիսեան՝ Գեօղալղարեցի, Վահան Տ. Յովհաննիսեան՝ Նոր-Բայազիտեցի և Վասիլ Տէր Խաչատրեան՝ Երևանցի:

Երևանի Կոնսիստորիայն ի 24 Մարտի 1886 ամի: ի 25 Հոկտ. 1890, ի 28 Յունիարի, ի 25 Սեպտ. 18 Նոյեմ. և յ31 Դեկտ. 1891 ամի թ. 499, 4609, 242, 3312, 3944 և 4517, մատուցանելով Սրբազան Սինոդին մի քանի քահանայացուների ուսման վկայականները, այն է, Մուխանջղցի Սարգիս Քեամալեանի, Թաղաբեանդցի Յարութիւն Տ. Մելքիսէգէկեանի, Նոր Սարխարցի Կարապետ Տ. Յովհաննիսեանի, Ղարաքիլիսեցի Ղազարոս Տ. Վար-

գանեանի, Ղուլալեցի Ներսէս Տ. Յովհաննիսեանի և Զոհրայ Մա-  
գոյեանի, այդ իսկ գիւղերում քահանայ չլինելու պատճառաւ  
խնդրում է քահանայ ձեռնադրել. իսկ 29 Յունիսի տարւոյս  
Սրբազան Սինոդը վերադարձնելով յիշեալ քահանայացուների  
վկայականները մերժում է կոնսիստորիայի միջնորդութիւնը և  
պատուիրում է աշխատել վերոյիշեալ թերուս քահանայացուների  
տեղ՝ Սինոդի 26 Յունիսի տարւոյս թ. 1856 և 1867 արձակած  
շրջաբերական հրամանի համաձայն ընտրել արժանաւորներին:

Տիխիսի կոնսիստորայն ի 13 Դեկտ. 1891, ի 15, ի 17 և 29  
Յունվարի, ի 4 և 10 Ապրիլի տարւոյս թ. 4331, 60, 84, 218,  
1172, 1186 և 1186 մատուցանելով Սրբազան Սինոդին Հախում-  
ցի Արշակ Տ. Սողոմոնեան Մանուշարեանց, Զովտառցի Վարդան  
Երեմեանց, Բերդեցի Վահան Տ. Յակովբեանց, Ղրղեցի Մալսէս  
Մխիթարեանց, Բաղինքցի Աբրահամ Տ. Մկրտչեան և Խեթու-  
բանցի Բաղդասար Փալիշեանց քահանայացուների պատշաճաւոր  
վկայականները, խնդրում է քահանայ ձեռնադրել նրանց: Սրբ-  
ազան Սինոդը յիշեալ քահանայացուների հարցաքննական թըղ-  
թերից տեսնելով, որ նոքա ըստ արժանւոյն չունին ուսումն  
բացի սորանից և վերոյիշեալ մի քանի գիւղերը արդէն քահա-  
նայ ունենալու պատճառաւ աւելորդ են և նորերը ձեռնադրել  
ուստի 29 Յունիսի տարւոյս մերժում է կոնսիստորիայի միջնոր-  
դութիւնը այդ քահանայացուների պատշաճապէս ուսումն չու-  
նենալու պատճառաւ, որի մասին և տեղեկագրում է կոնսիստո-  
րիային, վերադարձնելով հանգերձ յիշեալ քահանայացուների  
վկայականները:

Սրբազան Սինոդը տեսնելով Շամախու վիճակի Աշտալ գիւղի  
Սհարբէկեանց Յարութիւն քահանայի անուղղելի բարք ու վար-  
քը, անցեալ տարի 13 սեպտեմ. օրագրով պատուիրում է  
Շամախու կոնսիստորիային ուղարկել յիշեալ քահանային Սա-  
ղիանու վանքը, տեղւոյն վանահօր հսկողութեան տակ անսահման  
ժամանակաւ ապաշխարելու: Ապա նոյն կոնսիստորիայն անցեալ

տարի նոյեմբերի 21-ին թիւ 1160 իւր յայտարարութեան հետ ուղարկում է Աինօգին նոյն քահանայի իսկական աղերսագիրը, որը մատուցել է ինքն քահանայն տեղւոյն Գեր. թեմակալ Աւաջնորդին, իրեն կարգաւործ անելու շնորհ խնդրելով, որովհետեւ այդ աղերսագրի մէջ ինքն քահանայն յառաջ բերելով իւր ամենաթշուառ և նեղրակիր վիճակը, մանաւանդ իւր ընտանեկան վիշտ ու հոգսը իբրև անարժան ուն ծանր է համարում մնալ իրեն քահանայութեան լծի տակ: Արանից յետ տեղւոյն Աւաջնորդ Գեր. Մետրոլք Արքեպիսկոպոս Սմբատեանց Մարտի 11-ին թ. 76 ուղարկելով Աինօգին նոյն քահանայի մի այլ մեղսյական աղերսագիրը, յայտնում է որ, ինչպէս վկայում են գիւղացիքը և տեղւոյն գործակալը յիշեալ քահանայն հեռացել է իւր չափ ընթացքից և ուխտել է սրբութեամբ պահել իւր քահանայական կոչումը, չամնորոյ և խնդրում է ներել նորա յանցանքը թեթեւացնելով իւր պատիժը: Արբազան Աինօգը յարգելով Գեր. Աւաջնորդի միջնորդութիւնն և գործակալի ու տեղւոյն ժողովրդի քահանայի մասին արած վկայութիւնը, որ նա ուխտել է այսուհետև պարկեշտ և համեստ վարքով մնալ, պատուիրում է Գեր. Աւաջնորդին թողլ տալ քահանայագործութիւն անելու, և պարկեշտութեամբ հովուել իւր ժողովուրդը:

ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐՁԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յանձնաժողովն լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի Պ. Ղ. Աղա-  
յեանցի խնդրի վերայ ամիս 24-ին թ. 47 արած մակագրու-  
թիւնը այս բովանդակութեամբ. «Յանձնեմք ուսումնարանական  
Վարչական Յանձնաժողովոյն կարգադրել զարժանն վասն գոր-  
ծածութեան իւրին նշանակեալ դասագրոց յամենայն ուսում-  
նարանս Հայոց»: Պ. Ղ. Աղայեանցի խնդրի բովանդակութիւնը  
այս է. թեմական վերատեսուչները Ս. Էջմիածնի Ուսումն. վար-  
չական Յանձնաժողովի հրամանով շրջաբերական են ուղարկել  
իրանց թեմերում գտնուած ուսումնարաններին, որ իւր խընդ-  
րատուի «Ուսումն մայրենի լեզուի» երեք դասագրքերը գործա-